



Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

(Հիմնադրման 675-ամյակի առիթով)



առնեցին իր 30-ական թվականներին մոնղոլական բռնակալական ծանր լծի տակ տառապում էր հայ ժողովուրդը: Հայաստանը և Վրաստանը անսպասելի նվաճված լինելով չկարողացան կազմակերպված դիմադրություն ցույց տալ մոնղոլական հորդանքներին: Մեկ տարվա ընթացքում (1236 թ.) մոնղոլների ձեռքն անցան մի շարք խոշորագույն առևտրական բաղանջներ և նշանավոր ամրոցներ, ինչպիսիք են՝ Անին, Ղաթալ, Լոռին և այլն, իսկ յոթ տարվա ընթացքում (1236—1243 թ. թ.) արդեն ամբողջ Հայաստանը, բացառությամբ Կիլիկիան հայկական թագավորության, նվաճվեց մոնղոլների կողմից և ընկավ նրանց ծանր լծի տակ: Ազգաբնակչությունն անխնա ոչնչացվում կամ գերեվարվում էր, իսկ շտեմանված ծանր հարկերը, որոնք բաժնում էին ժողովրդի վերջին կենսական հյուսիսը, գրկում էին երկիրը տնտեսական հետադաճից ու զարգացումից: Հայաստանն ապրում էր անտեսական և կոտորածական անկում: Այդ համատարած ավերումից ու ոչնչացումից համեմատաբար ամսման էին մնացել միայն Հայաստանի մի քանի նահանգներ, որոնց թվում և Սյունիքը:

Սյունիքի իշխան Սմբատ Օրբելյանը այցելելով մոնղոլական մեծ խանին և թանկարժեք նվերներ մատուցելով նրան, կարողացավ ձեռք բերել ինքնուրույն իրավունք: Դրա շնորհիվ հավաքված հարկերի մեծ մասը մնաց Սյունիքի ներսում:

Սմբատից հետո Տաթալի Օրբելյանը շարունակեց իր եզրուր բաղաբանությունը: Մի շարք ռազմական հաղթանակների շնորհիվ Տաթալի Օրբելյանը կարողացավ ձեռք բերել մոնղոլական իշխանավորների հովանավորությունն ու սերը:

Նույն դրության մեջ էին և Պոռչյանների (Խաղբակյանների) իշխանական կալվածները Վայոց ձորում:

Պոռչյան Խաղբակյանը, մասնակցելով Բաղդադ և Նիքիի ռազմական արշավանքներին, նույնպես օգտվում էր մոնղոլական իշխանությունների հովանավորությունից: Պապակի կառավարման (1284—1299 թ. թ.), նրա եղբոր որդի Էաշու (1299—1317 թ. թ.) և ապա Ամիր Հասան Բ-ի (մեռ. 1351 թ.) օրոք Պոռչյանների կալվածները գտնվում էին համեմատաբար բարվոք վիճակում: Դրանով էր պայմանավորված գիտական ուժերի և ընդհանրապես Հայաստանի մյուս նահանգներից ազգաբնակչության մեծացող ձգտումը զեպի Սյունիք:

Սյունիքում, Օրբելյան և Պոռչյան իշխանների այս յուրատեսակ բաղաբանության շնորհիվ տնտեսական-կոտորածական կյանքը հանգամանակաբար արագացավ, թեև զարգացման պրոցեսը անցյալի համեմատությամբ բավականաչափ դանդաղել էր: Բայց այնուամենայնիվ Սյու-

1. «Պատմության նահանգին Սիսական արարեալ Սանփանսի Օրբելյան արքայիսկոպոսի Մինեաց», Թիֆլիս, 1910 թ., դ. 2, էջ 423:

ները պահպանում էր տեղաբնակյալ կապերը հարեան երկրների՝ Վրաստանի, Ադրբեջանի, Իրանի և այլ ժողովուրդների հետ: Երկրի ներսում օգտագործվում էին պղնձի հանքերը Ղափանում, հիմնադրվել էր պղնձաձուլարան Աջանանում, կառուցվել էին մի շարք նոր ամրոցներ, բերդեր ու իջևանատներ (քարվանսարաններ), կերտվել ճարտարապետական հրաշալի հուշարձաններ՝ Կրկհարկանի եկեղեցիներ ու վանքեր, որտեղ համակենտրոնացվեց երկրի լուսավորական ու հոգևոր կյանքը: Հայ ժողովրդի կուլտուրական կյանքի խոշորագույն օջախներից մեկը դարձավ Գլաձորի համալսարանը:



Հայաստանում հատուկ ուշադրություն էին դարձնում երկրի հոգևոր կյանքի պահանջների բավարարման համար անհրաժեշտ կադրեր պատրաստելու գործին և այդ նպատակով հիմնում կրթարաններ: Միջնադարում նշանավոր ուսումնական հաստատություններն են եղել Հովհաննես Սարկավազի դպրոցը Անիում (1045—1129 թ. թ.), Մխիթար Գոշի դպրոցը Նոր-Գեորգիում (1130—1213 թ. թ.) և ուրիշները: Այս դպրոցների փառահեղ ժառանգությունը, որոնք երկրին պարգևել են բավական թվով բազմակողմանիորեն դարձացած գիտնականներ և լուսավորական գործիչներ, շարունակեց Գոշի աշակերտ Վանական վարդապետը. նրան հաջորդում է նշանավոր մանկավարժական ու գիտական գործիչների մի ամբողջ համաստեղություն՝ Վարդան Արեւելցի (Մեծ), Հովհաննես Երզնկացի, Ներսես Մշեցի (Տարոնացի), Եսայի Նշեցի, Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի և շատ ուրիշներ: Բայց մոնղոլական տիրապետության ծանր ժամանակներում, հալածանքի, ավերածության և ամալացման պայմաններում ուսումնական ու գիտական հիմնարկները հաճախ հարկադրված էին լինում թափառական կյանք վարել:

Այդպես, երկար թափառումներից հետո, 13-րդ դարի վերջին տասնամյակներում Գլաձորի վանքում հանգրվան է դառնում Վարդան Արեւելցու դպրոցը Ներսես Մշեցու զբաղվողությամբ:

Ներսես Մշեցու մասին մեր տեղեկությունները շատ սակավաթիվ են և նրա գրական ու գիտական գործունեության մասին գրեթե ոչինչ չգիտենք: Հայտնի է միայն, որ նա ծագմամբ Տարոնից է, Մուշ քաղաքից, սովորել է Ս. Առաքելոց վանքում, ապա Վարդան Արեւելցու դպրոցում և մահացել խոր ծերության մեջ, Գլաձորում, որտեղ և թաղվել է 1284 թվին:

Որ Ներսես Մշեցին կյանքի վերջին տա-

րիները անց է կացրել Գլաձորում, այդ մասին վկայում է նրա աշակերտ Մատթեոս Կիլիկեցու մոտ պահպանված հետևյալ տեղեկությունը. «...յետ փոխման նորա (Վարդանայ) ... նստաւ յաթոռ նորին և լուսափայլեաց զազգ Հայոց ուսմամբ գրոց (ներսէս). և հասեալ բարիոք ծերութեան հանգեաւ... ի նոյն վանս Գլաձորոյ»²:

Ինչպես տեսնում ենք, Ներսես Մշեցին իր վարդապետության վերջին տարիները անց է կացրել և մեռել է Հայաստանի կուլտուրական խոշորագույն օջախներից մեկում՝ Գլաձորում: Այդ պատճառով էլ Գլաձորի բարձրագույն ուսումնական հաստատության համալսարանի հիմնադրումը արդարացիորեն կապվում է Ներսես Մշեցու անվան և գործունեության հետ (1269/71—1284 թ. թ.)³:

Գլաձորը (անվանվել է նաև Գալաձոր, Գալեձոր, Գալիձոր, կամ թե Ադրեբջ վանք), որը բառացի թարգմանությամբ նշանակում է «Գալի ձոր», գտնվել է Պոռչան իշխանների տիրապետության տակ Վայոց Ձորում: Գլաձորի համալսարանի պատմությունը նրա տեղագրությունը հետադոտողների համար մնացել է անհայտ: Նրա հայտնարկված հետքերը ոչ մի կերպ չեն համապատասխանում այդ համալսարանի հռչակին: Արդարացի է Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանը կասկածելով, որ այն ավերակները, որոնք համարվում են Գլաձորի հետքերը, շատ աննշան են, և ոչ մի ընդհանուր բան չունեն նրա հետ: Հասարակ, չհղկված քարեով կառուցված մի եկեղեցու ավերակներ են դրանք և հիմք չեն տալիս ենթադրելու, թե դրանք մնացորդներն են մի մեծ վանքի, ինչպիսին եղել է Գլաձորը: Երջապատում չկան վանքի ամբողջականության մնացորդները,

2. Ղ. Ալիշան, «Սիսական», Վենետիկ, 1893 թ., էջ 131.— Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Քաղաքական կամ Պոռչանք», մասն Բ, էջ 191, մասն Գ, էջ 152 (հավելված Բ, 59) և Լ. Խաչիկյան, «Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները», Վ. Մ. Մուրումովի անվան Պետական համալսարանի գիտական աշխատություններ, հատոր XXIII, Երևան, 1946 թ., էջ 426:

3. Լ. Խաչիկյան, «Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները», էջ 426: Վարդան Արեւելցու մահվան տարեթիվը հետազոտողների կողմից ճշգրտորեն չի որոշված: Սկզբնաղբյուրների մի խմբի հիման վրա թվագրվում է 1269 (տե՛ս Լ. Խաչիկյանի նշված աշխատությունը, էջ 425), իսկ մի այլ խմբի տվյալներով՝ 1271 (տե՛ս Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Քաղաքական կամ Պոռչանք», մասն Բ, էջ 193): Այդ պատճառով Ներսես Մշեցու ինքնուրույն ուսուցչական գործունեությունը մեր կողմից նույնպես նշվում է այդ տարեթվերի հիման վրա:

որը սովորաբար բաղկացած է լինում եկեղեցիներից, դպրոցից, մատենադարանից, սեղանատներից, բաղամաթիվ կացարաններից և մի քանի լրացուցիչ կառուցվածքներից: Կասկածանքն ավելի է հաստատվում, երբ հարց է առաջանում, թե ինչու՞ նույն ժամանակի, կամ մոտավոր դրանից առաջ կառուցված մյուս եկեղեցիների ու վանքերի մնացորդները պահպանվել են մինչև մեր օրերը, ըստ որում ոչ միտ վիճակում, իսկ Գլաձորից չի մնացել ոչինչ հետք:

որ ժողի Աղբերց վանս և մականունն Գլաձոր»¹ և յատեղից էլ բխում է Ղ. Ալիշանի ենթադրությունը այն մասին, թե Գլաձորի վանքը սկզբնապես կոչվել է Աղբերց վանք՝ Այս կապակցությամբ հետաքրքրական է նշել, որ Գլաձորին ժամանակակից «Պատմությունն» հանդիս Արսական» գրքի հեղինակ Ստեփանոս Արքեպիսկոպոսը ոչ մի տեղ չի հիշում այդ վանքի Գլաձոր կամ Աղբերց վանք անվանումները՝

նրանով ուղղակի և անուղղակի տվյալներ



ԹԱՆԱՏԻ ԿԱՄ ԳԼԱԶՈՐԻ ՎԱՆՔԸ

Դեռևս իր ժամանակին Ղ. Ալիշանը նկատել է, որ Գլաձորը, ըստ երևույթին, ունեցել է այլ անվանում: Այդ կասկածանքը հիմնված է Մխիթար Սամսեցու վկայության վրա, որը հաղորդում է. «Ի վանսն որ այժմ ասի Գլաձոր»²: Մի օրինակ գրչի մոտ, 1291 թվին ձևադրում, կարդում ենք. «Ի մենաստանս

րից մենք հանդեցինք այն եզրակացության, որ միջնադարյան Հայաստանի և հենց իրեն՝ Գլաձորի համալսարանի պատմության այդքան կարևոր հարցում խորապես իրավացի է դիտնական ազգագրագետ Նըվանդ Լալայա-

¹ Նույն տեղում:

² «Պատմությունն» հանդիս Արսական», Թիֆլիս, 1910 թ.

³ Ղ. Ալիշան, «Արսական», էջ 130:

ներ: Նրա «Կայոց ձոր կամ Գալարագյազ» աշխատության մեջ ասվում է, որ Օրթաքենդ գյուղից (այժմ՝ Գլաձոր) դեպի Հյուսիս-արևելք գտնվում է 13—14-րդ դարերում հայտնի Գալարաձոր կամ Գլաձոր վանքը, որը հետագայում սկսվեց անվանվել Ղարա-վանք⁷: Այնուհետև Ե. Կալայանի այդ նույն աշխատության մեջ նշվում է, որ Ղարա-վանքը միևնույն թանաթի վանքն է, որը կառուցվել է 13-րդ դարում և որտեղ ամփոփված է եղել 735 թվին Մոզես գրողում նահատակված Ստեփանոս Կախկոպոսի մարմինը⁸:

Այնուամենայնիվ, ինչ սկզբնաղբյուրների վրա է հենվել Ե. Կալայանը նույնացնելով Գլաձորը Ղարա-վանքի հետ, մնում է անհայտ: Ծիշտ է, Օրթաքենդի պատմիչի մոտ հիշատակված է, որ Ստեփանոս Այուսեցի եպիսկոպոսը զոհվել է մի կնոջ ձեռքով և թաղվել թանաթի վանքում⁹, սակայն դա բավական չէ թանաթը Գլաձորի հետ նույնացնելու համար: Բայց գոյություն ունի մի վկայություն, որի շնորհիվ հնարավոր է որոշել Գլաձորի տեղագրությունը: Այն պահպանվել է 1283—1284 թվականների մի հավաքածուի հիշատակարանում, որտեղ գրիչ Մատթեոս Կիրիկեցին գրում է.

«...եկեալ յայս գաւառի,
Որում անուն Վայ ձոր,
Հուպ ի շիրիմն Սինեցի,
Ի Աղբերց վանս մենաստանի,
Յերկրորդ Աթէնս պանծալի,
Առ ոտըս հար մեր Ներսէսի,
Եւ բարոնաց վարդապետի¹⁰,
Հասեալ ի ծայրս իմաստ բանի...»¹¹:

Բերված վկայությունից պարզ է, որ խոսքը վերաբերում է Աղբերց վանքին, այսինքն Գլաձորին՝ «երկրորդ Աթէնս պանծալի»¹²,

7. Ե. Կալայան, «Շարուր-Գալարագյազի գավառ, Կայոց ձոր կամ Գալարագյազ» «Ազգագրական հանդես», XII գիրք, 1904 թ., Թիֆլիս, 1905 թ., էջ 271:

8. Նույն տեղում, էջ 267:

9. «Պատմութիւն նահանգին Սիսական», գլ. IV և IVa:

10. «Բարոնաց վարդապետ» կամ հաճախ «վարդապետաց վարդապետ» սովորաբար կոչվել են այն ժամանակվա ուսումնական հաստատության ղեկավարները:

11. Հ. Հակոբոս Տաշյան, «Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիննա», Վիննա, 1895 թ., էջ 1039: Ղ. Ալիշան, «Միսական», էջ 130: Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Խաղրակյանք» կամ Պոռչյանք հայոց պատմության մեջ», մասն Բ, էջ 205—206:

12. Այդպես էին անվանում ժամանակակիցները Գլաձորի համալսարանը:

որի եկեղեցում էլ գտնվում է նահատակված Ստեփանոս Այուսեցի եպիսկոպոսի գերեզմանը: Այդ պատճառով էլ Գլաձորը հաճախ կոչվել է նաև «վանք Գլաձոր Ս. Ստեփանոսի»¹³: Այսպիսով, ստացվում է, որ Թանաթ (Ղարա-վանք) — Աղբերց վանքը նույն Գլաձորն է: Եվ իրոք, ոչ մի կասկած չի կարող, որ Թանաթի վանքը հենց ինքը՝ Գլաձորն է: Համեմատելով Թանաթի վանքի սահմանները որոշող տվյալները, կարելի է տեսնել, որ հենց նույն այդ տվյալները վերաբերում են և՛ Գլաձորին: Այսպես, Ղ. Ալիշանի մոտ անվում է, որ Գլաձորը սահմանակից էր Եկեղյաց ձորին¹⁴: Ըստ Օրթաքենդի, Կինչակա և Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանի, Թանաթ — Ղարա-վանքը նույնպես գտնվում է Եկեղյաց ձորին կից¹⁵:

Կա նաև մի փոքր, ոչ պակաս հետաքրքիր, վկայություն: Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանը խոսելով Գլաձորի մասին, ցույց է տալիս, որ այն գտնվում է Սրկղունի Պոռչիշխանի դաստակերտից («ղարբաս») ոչ հեռու¹⁶, իսկ ըստ Ե. Կալայանի այդ դաստակերտի մնացորդները գտնվում են Բաշքինդ գյուղի ծայրամասում (որը նույնացվում է Սրկղունի ձորի հետ)¹⁷, այսինքն, դարձյալ Թանաթի վանքից ոչ հեռու¹⁸: Թանաթի վանքի ծաղկման ժամանակաշրջանը, նրա բուռն զործունեությունը, որի մասին մեզ պատմում են այդ վանքի վիմագիր արձանագրությունները, նույնպես համընկնում են Գլաձորի համալսարանի գոյության ժամանակաշրջանին¹⁹:

Այժմ, երբ պարզ է, որ Գլաձորը և Թանաթը, ըստ էության միևնույն վանքի տարրեր անվանումներն են, մեզ դարձանալի չի թվում այն երևույթը, որի առթիվ այնպես արդարացիորեն տարակուսում էր Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանը: «Խաղրակյանք կամ

13. Այդ եպիսկոպոսի անվամբ կոչվում էր Թանաթի վանքը, ավելի ճիշտ վանքի եկեղեցին — «յարկ սրբոյն Ստեփանոսի», «Ս. Ստեփանոսի գերեզման» (տե՛ս Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան «Խաղրակյանք» կամ Պոռչյանք», մասն Ա, էջ 130):

14. Ղ. Ալիշան, «Միսական», էջ 130:

15. «Պատմութիւն նահանգին Սիսական», գլ. V, էջ 259: Գ. արքեպիսկ. Հովսեփյան, «Խաղրակյանք» կամ Պոռչյանք», մասն Ա, էջ 115:

16. Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Խաղրակյանք» կամ Պոռչյանք», մասն Բ, էջ 196:

17. Նույն տեղում, մասն Ա, էջ 115:

18. Ե. Կալայան, «Շարուր-Գալարագյազի գավառ», էջ 270:

19. Տե՛ս «Материалы по археологии Кавказа», выпуск XIII, под редакцией П. С. Уваровой и Х. И. Кучук-Иоаннесова, Москва, 1916 г., стр. 134. — Գ. արքեպիսկ. Հովսեփյան, «Խաղրակյանք» կամ Պոռչյանք», մասն Ա, էջ 175:

յոնք հալոց պատմություն մեջ» աշխատություն թ մասում, Թանաթի վանքին նվիրված հատուկ գլխում առվում է՝ «Համալսարանի շինարարական, սակայն, որ ժԻ դարի կենտրոնը համարվում է ժԻ-ի կենտրոնը արձանագրություններով միջին ժԻ-ի կենտրոնը, որ մեղի էմ և առաջ-հարուստ մի վանքում, որ մեղի էմ և առաջ-նորդ «վարդապետ»-ներ, այդպիսի ամուլ լինելը հետադարձաբար արվեստի կողմից²⁰։ Եվ իրար, մեղ շին հասել հետադարձ, բացառությամբ երկու—երեքի, որոնց մեջ նշված լինի, թև նրանք գրվել են Թանաթի վանքում։ Եվ դա հասկանալի է, քանի որ այդ վանքի բազմա-թիվ հետադարձ վաճառքով էմ հենց իրեն համալսարանի՝ Գլխավոր անվամբ։

Այսպիսով, այժմ մեղ հայտնի Թանաթի վանքը, կարելի է ասել, որ 13—14-րդ դարերում, համալսարանի գոյության ժամանակա-շրջանում (նաև հետագայում) հայտնի է մեղի Գլխավոր կամ Աղբյուրի վանք անուններով։

Մենք հակված ենք այն կարծիքին, որ Գլխավոր հնագույն և հիմնական անվանումը եղել է ոչ թև Աղբյուրի վանք, ինչպես մեթադրել է Ղ. Ալիշանը, այլ Թանաթի վանք։

Թանաթի վանքին կից, դեռ միջին համալսարանի հիմնադրումը, եղել է կրթնավորնե-րի միաբանություն, ծագվել է հոգևոր-կույ-տության կյանքը, և այդ վանքը հանդիսա-ցել է ոչ պակաս հայտնի հոգևոր կենտրոն, որն իր եղբայրության կողմից տվել է մի գիտնական, որին ժամանակակիցները ան-վանել են «անհայտ» փոխադրում²¹։

Համալսարանն էլ իր նոր՝ Գլխավոր անվա-նումն ստացավ ներսև Մշակույթ վարդապետության օրոք։ Այդ անվանումը, մեր կարծի-քով, կապված չէ միայն Գլխավոր տեղանքի հետ, որից ոչ հետո գտնվում է Թանաթի վանքը։ Այն, ինչպես երևում է, ծագում է Տարնում²² գտնվող Մուշի Ս. Առաքելոց վանքին կից միևնույն անունը կրող դպրո-ցից, որտեղ ներսև Մշակույթ ստացել է իր սկզբնական կրթությունը²³։ Այլ կերպ ասած համալսարանի անվանումը բերվել է ներսև վարդապետի հետ իր հայրենի երկիր Տար-նից։

20. Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Տաղարական կամ Պոռնյան», մաս Բ, էջ 175։

21. «Փոխադրում» բառը հայերի մոտ, միջնագրում, իր հիմնական իմաստից բացի, կարող էր նշանակել նաև երգիչ, երաժիշտ (տե՛ս Գարեգին արքեպիսկ. Հով-սեփյան, «Տաղարական կամ Պոռնյան հայոց պատ-մության մեջ», մաս Բ, էջ 159)։

22. Այդ առիթով մենք շ. ներսև Սարգսյանի մոտ, «Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայս» աշխատու-թյան մեջ (Ղենեթի, 1864 թ., էջ 236), կարգում ենք. «Մենաստան Առաքելոց կոչի և Գլխավոր վանք, թերևս վանի խորանդուղ ձորոյն որ ի յաջմէ մենաստանին»։

23. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 131։

Համալսարանի արդյունք, շատ հնարավոր է, ստաբիլանալու ամրապնդել Գլխավոր ստաբիլանալու դիրքը Թանաթի վանքում, որը և, ինչպես երևում է, արտահայտվել նրանով, որ նրա անունը տարածվել նաև ամբողջ Թա-նաթի վանքի վրա, կոչվելով Գլխավոր վանք։

Թանաթի վանքը, որի անվան տակ այդպիսի երկար ժամանակ «թաքնված էր» Գլխավոր հնագույն համալսարանը, իր ժամանակին հանդիսացել է երկրի խոշորագույն կուլտու-րական կենտրոններից մեկը²⁴։

Այդ մեծաստանը իր Գլխավոր վանք ան-վանումն ստացել է բավականին ուշ, 19-րդ դարում, լուսավոր (աղբյուրական) աղ-գարնակչության կողմից, որը և բառացի թարգմանությամբ նշանակում է «Սև վանք»։ Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանը այդ ան-վանումը եկեղեցու մուգ քարի գույնից, որը ժամանակի ընթացքում բոլորովին սև է դարձել, առաջացած չի համարում, ինչպես այդ անուն են Ղ. Ալիշանը, Ե. Լալայանը և ուրիշները²⁵։ Գարեգին արքեպիսկ. Հովսեփ-յանի կարծիքով Գլխավոր վանք ոչ այլ ինչ է, ինչն ոչ հին Քարեանք (այսինքն բարից կա-ուցված վանք) անվանման աղավաղու-մը²⁶։ Այս կարծիքը արդարանալու որոշ հիմքեր ունի, քանի որ նման անվանման հանդիպում ենք Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ²⁷, որի վրա էլ հենվում է Գարեգին արքեպիսկոպոսը։

Թանաթի վանքը հիմնադրվել է 7—8-րդ դարերում, Այդ ժամանակվա վանքից ոչինչ չի պահպանվել, և այժմ տեղում միայն հետքեր ու անացորդներ կան մի եկեղեցու, որն իր կառուցվել է 1273 թվին Պոռն իշ-խանի և նրա որդիների կողմից, որպես մե-

24. Տեղին է նշել, որ մի շարք հնագույնագետների, սկսած Ղ. Ալիշանից, շփոթեցնում է նույնանուն մի վանք (Թանաթ), որը գտնվել է Օրբելյան իշխան-ների տերիտորիայի վրա, Տաթևից մի քիչ հյուսիս, որը և Ստեփանոս Օրբելյան պատմիչի կողմից եկեղե-ցիների ու վանքերի թվարկման մեջ հիշվում է առա-ջիններից մեկը Տաթևի վանքից հետո Օրբելյանը իր գրքի մեջ Գլխոց-ձորի Թանաթի վանքը հիշատակում է Հերմոն վանքից հետո (տե՛ս նրա «Պատմությունը հա-հանգին Սիսական», գլ. ԿԲ, էջ 335, 340, ինչպես և Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 119, Բ. Խ. Հակոբյան, «Հայաստանի պատմական աշխարհագրություն», պրակ 2-րդ, Երևան, 1952 թ., էջ 145 և ուրիշներ)։

25. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 119— Ե. Լալայան, «Շարուն-Գարալագյալի գավառ», էջ 267։ — «Ма-териалы по археологии Кавказа», выпуск XIII, стр. 125 և ուրիշները։

26. Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Տաղարա-կան կամ Պոռնյան», մաս Բ, էջ 115։

27. «Պատմությունը հա-հանգին Սիսական», գլ. Կ, էջ 259։

նաստան Ս. Ստեփանոսի և իրենց տոհմապետ Պոռ իշխանի հիշատակը հավերժացնելու համար, իսկ եկեղեցուն կցված զանգակատունը (հյուսիսային կողմից) թվագրված է 1279 թ.²⁸։ Եղել է նաև մի տարի, երբորդ կառուցվածք հարավային կողմից, որից մնացել են միայն ամենա հետքեր²⁹։ Մեր կարծիքով, եկեղեցին կառուցված է եղել ավելի վաղ, 1250—1260 թվականներին³⁰։

Զիմանալով Գլաձորի ճիշտ տեղագրությունը, հնարավոր չէ որոշել համալսարանի նկատմամբ ունեցած նաև Պոռլյան իշխանների հովանավորության բնույթը³¹։ Մի շարք ձեռագրերից հայտնի է, որ Պոռլյան իշխանները եղել են Գլաձորի համալսարանի հովանավորները, իսկ 1328 թվ. մի ձեռագրի հիշատակարանում Պոռլյանները անվանված են «տէր և իշխեցող սուրբ մեհարանիս և տանս դպրոցական ժողովուրդ»³²։

Անկասկած, Թանատի վանքը և Գլաձորի համալսարանը տնտեսական մեծ օգնություն են ստացել ինչպես իրենց անմիջական հովանավորներից, այնպես և այլ անձնավորություններից։ Զէ՞ որ համալսարանը առանց նյութական օգնության չէր կարող պահել այդքան մեծ թվով սաներ։ Եվ, իրոք, ինչպես երևում է Ս. Ստեփանոսի եկեղեցու և զանգակատան պատերին եղած ար-

ձանագրություններից³³, Թանատ-Գլաձորյան վանքը ուներ ընդարձակ հողային տարածություններ։ Նվիրարեքողները համադաստում էին գլխավորապես Պոռլյան տոհմի անդամները, նշանավոր Պոռ իշխանի որդիներն ու թոռները։ Վացի Պոռլյաններից նվիրարեքում էին նաև Օրբելյանները և ուրիշները։ Նվիրատվությունը վանքի օգտին, ինչպես երևում է արձանագրություններից, բավական մեծ է եղել։ Թանատ-Գլաձորի վանքին նվիրվել են վարելահողեր, պտղատու և խաղողի այգիներ, կալվածներ, սմառանոցներ և այլն, ինչպես այդ սովորաբար արվել է խոշոր վանքերի նկատմամբ, հատկապես մոնղոլական տիրապետության ժամանակ։ Այդ նվիրատվություններից բացի վանքը ապահովվում էր դրամով (ոսկով)։ Տաճարի սպասավորները դրա փոխարեն պարտավոր էին նվիրատուների համար պատարագ մատուցել։

Հողերի շահագործումն ու դրամական նվերները, հավանաբար, ապահովել են համալսարանի բազմաթիվ սաների ու վանքի միաբանության ծախսերը։

Պարզելով Գլաձորի ճիշտ տեղագրությունը, շնորհիվ Թանատի վանքի վիճակի ճոխ ու առատ արձանագրությունների, մեր առաջ բացվում է այդ նշանավոր կուլտուրական-հոգևոր կենտրոնի տնտեսական կյանքի պատկերը։ Գլաձորի համալսարանը, անկասկած, սրտք է դրավի հայ ժողովրդի անցյալի դպրոցական կյանքը հետազոտողների ուշադրությունը։

Հատկապես Գլաձորի համալսարանում սկսեց իր գործունեությունը վարդան Արևելցու դպրոցը՝ ներսես Մշեցու գլխավորությամբ, որը մինչ այդ թափառում էր հայրենի երկրում և մշտական հանգրվան չէր գտնում։



Գլաձորի վանքը սովորական վանքերի նման չէր, ինչպես օրինակ Կեչառիսը, Գեղարզը (Ալբիվանքը) և ուրիշները, որոնք նույնպես ունեցել ժն վարդապետներ ու աշակերտներ, այլ հանդիսացել է բարձրագույն ուսումնական հաստատություն—համալսարան։

28. Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Քաղաքական կամ Պոռլյան», մասն Ա, էջ 118։

29. Նույն տեղում, էջ 124։

30. Ի միջի այլոց եկեղեցու թվագրման հարցը կարող է մանրազնին ստուգման, որովհետև եղած տեղեկությունները բացահայտ հակասական են։ Եթե վանքը կառուցված լինի 1273 թվին, ի՞նչով բացատրել ապա նրա պատերին գտնվող ավելի վաղ շրջանի արձանագրությունները, որոնք գալիս են 1251 թվից գեոևս Այդ արձանագրություններն էլ, մեր կարծիքով, իրենց բնույթով հաստատում են, որ նրանք ոչ մի կերպ չեն կարող գրված լինել հետագա շրջանում։ Այդ պատճառով էլ մենք ճիշտ չենք համարում մի շարք հեղինակների պնդումներն այն մասին, որ Ս. Ստեփանոսի եկեղեցին կառուցված է եղել 1273 թվին (տե՛ս Քաջբերդյան, «Ժամանակագրական նկատողություններ», «Արարատ» ամսագիր, 1889 թ., փետրվար, Վաղարշապատ, էջ 102։—«Материалы по археологии Кавказа», выпуск XIII, стр. 126.—Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Քաղաքական կամ Պոռլյան», մասն Ա, էջ 117 և ուրիշները)։

31. Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Քաղաքական կամ Պոռլյան», մասն Բ, էջ 196։

32. Նույն տեղում, էջ 197։—Տե՛ս և մասն Ա, էջ 199—200 և մասն Գ, հավելված Բ, 24, ինչպես և Ղ. Ալիշան, «Սխական», էջ 133։

33. Ղ. Ալիշան, «Սխական», էջ 90—205 («Ելալոց կամ Եղեգեաց ձոր»)։— Ե. Կալանյան, «Ելալոց ձոր» (նշանավոր վանքեր), «Աղագրական հանդես», XXVI գիրք, 1916 թ., Թիֆլիս, 1917 թ.։— Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Քաղաքական կամ Պոռլյան» հատոր Գ.—«Материалы по археологии Кавказа», выпуск XIII և ուրիշները։

Ամենահին տեղեկությունը Գրաձորի Համալսարանի մասին գտնում ենք 1280 թվականի մի ձեռագրի մեջ, որի պատվերատուն եղել է «Ճարտասանն մեծ Ներսէս»։ Այնտեղ մի հետաքրքրական դրույթուն կա՝ «զնուաստ ողիս Նաայի հետևող և աշակերտսր, առնն Աձյ Ներս. վրի.³⁴», ավերացված

Ներսես Մշեցու գրչակից աշակերտ Նաայի Նշեցու ձեռագրի, որը փոխաբերնեց Վրաստանի և կանգնեց Համալսարանի գլուխ։ Նաայի Նշեցու օրոք Գրաձորը լայն հռչակ էր ձեռք բերել։

Նաայի Նշեցին ծագմամբ Սասունից էր,



ԽՈՐԱՆ «ԵՍԱՅԻ ՆՁԵՑՈՒ ԱՍՏՎԱՍՏՈՐՆՁ»-ԻՅ
ՆԿԱՐԻՉԻ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՅԻ, ՎԱՅՐԻ ԴԱՂՈՐ, 1318 թ.

(Հայկ. ՍՍԻ Պետ. մատեն. ձեռ. N 206, ր. 439ր)

34. Հայկական ՍՍԻ Պետ. մատեն. ձեռ. N 1111, ր. 6ր։

ծնվել է Նիշ ավանում։ Նրա ծննդյան ճիշտ թվականը հայտնի չէ, բայց մի շարք վկայությունների հիման վրա կարելի է ենթա-

դրաբար այն նշանակել մոտավորապես 1248—1253 թվականներին³⁵։

Եսայի Նշեցին սկզբնական շրջանում սովորել է վարդան Արենցու մոտ, իսկ նրա մահից հետո շարունակել է ուսումը Ներսես Մշեցու մոտ։ Եսայի Նշեցին մեռել է խոր ծերության մեջ, մոտավորապես 85—90 տարեկան հասակում, 1338 թվին³⁶։

Ներսես Մշեցու մահից հետո, 1284 թվին, Եսայի Նշեցին Գլաձորի համալսարանի ղեկավարությունն իր ձեռքն է առնում և շատ բազմաթիվ գործունեություն ծավալում մինչև իր կյանքի վերջին տարիները, գրեթե 55 տարի։ Նրա օրոք Գլաձորյան վարդապետարանը գիտական մտքի կենտրոն դարձավ, ձեռք բերելով մեծ փառք ու համբավ։

Այն մասին, թե որքան հռչակված է եղել Գլաձորի համալսարանը, վկայում են ժամանակակիցների կարծիքները։ Այսպես՝ Մատթեոս Կիլիկեցի գրիչը 1284 թվին այն անվանում է «երկրորդ Աթենք պանծալի», Տիրատուր Կիլիկեցին 1302 թվին կոչում է «մեծ դպրատուն», Մխիթար Երզնկացին 1314 թվին գրում է՝ «մայրն իմաստից Գլաձոր», Հակոբ Թագորցին 1318 թվին անվանում է՝ «մայրաքաղաք ամենայն իմաստից», իսկ Կյուրեղ գրիչը 1321 թվին հայտնում է՝ «հռչակաւոր, սուրբ մենաստան համալսարան» և այլն։

Եւտ հետաքրքրական է նաև ժամանակակիցների վկայությունը համալսարանի ուսուցչապետների մասին։ Ներսես Մշեցի վարդապետին անվանել են «մեծ հոգևոր», «ամենագիտ վարդապետ», «արդիմակալաւոր վարդապետ»։ Եսայի Նշեցու մասին արտահայտվել են ոչ պակաս գովեստներով. այսպես նրան անվանել են՝ «ամայաղթ հոգևոր», հոգեհանձար, գերիմաստ բարունապետ և հայր հոգևոր», «քաղցրահանձար փրկիսփայլ և բանիրուն... տիեզերալոյս բարունապետ», «մեծ բարունապետ բոլոր Հայաստանեայց», կամ թե՛ «լուսաւոր այր Աստուծոյ», «մեծ սովեստոս», իսկ Ստեփանոս Օրբելյան պատմիչը նրան անվանել է «յիսուսական համալսարանացն պետ», «դպրապետ անճառ դպրոցացն», «համակ դիւան անհասական խորոցն»,

35. Լ. Խաչիկյան, «Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները», էջ 426—427։

36. Ղ. Ալիշան, «Միսական», էջ 131։ Ըստ Մինաս Համդեցու՝ Եսայի Նշեցին մեռել է 1342 թվին (Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Քաղաքական կամ Պոռնյան», մասն Բ, էջ 279)։ Մ. Օրմանյանի մոտ Նշեցու մահը նշանակված է 1333 թվին (Մաղաբիա արքեպիսկ. Օրմանյան, «Ազգապատում», Կոստանդնուպոլիս, 1912 թ., մասն Բ, էջ 1800)։

իսկ համալսարանի ղեկավարության գծով Եսայի Նշեցու մերձավոր օգնական Դավիթ վարդապետին անվանել են «եռամեծն Դավիթ» և այլն։ Եվ իրոք, ընթացիկ աշխատանքներում արտահայտություններին, համալսարանի հիմնադիրներ Ներսես Մշեցին և հատկապես Եսայի Նշեցին եղել են իրենց դարաշրջանի խոշորագույն ղեկավարը։ Համալսարանի ղեկավար Եսայի Նշեցու մեծությունը և բարձր հեղինակության վառ ապացույց կարող է ծառայել թեկուզ հենց այն փաստը, որ իշխանների, կաթողիկոսների, եպիսկոպոսների հետ միասին նրա անունը ևս անցել է պատմության ժամանակագրության մեջ³⁷։

Եսայի Նշեցին խոշորագույն գիտնական էր. նա տիրապետում էր մի շարք լեզուներին, հրաշալի ուսումնասիրել էր հին հունական հեղինակներին՝ Արիստոտելին, Պլատոնին և ուրիշներին։

Եսայի Նշեցու երկարամյա գործունեությունը, ինչպես նշել է Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանը³⁸, ընդգրկում է հետևյալ բնագավառները՝ կրոնական-եկեղեցական, մանկավարժական և գիտական-գրական։

Եսայի Նշեցու կրոնական-եկեղեցական գործունեությունը սերտորեն կապված է եղել կաթողիկոսների՝ «ունիթոս»-ների (միարարենբերի) շարժման դեմ մղվող պայքարին, որը ուժեղ կերպով հանդես եկավ Կիլիկիայում 13-րդ դարի վերջերից, իսկ 14-րդ դարի 20-ական թվականներին ծավալվեց նաև Մեծ Հայքում։

Հոգևորականությունը հարկադրված էր բացահայտ պայքար մղել ոչ միայն ունիթոսականության գլուխ անցած կաթողիկ եպիսկոպոսների ու իշխանների դեմ, այլ նաև ամեն կերպ ձգտում էր ժողովրդին նախագոյացնել ունիթոսականության ահաբեկող վտանգից։ Ներքում քարոզում էին կաթողիկ հոգևորականները, որոնք ավելի ակտիվ գործունեության համար իրենց հենակետը՝ կաթողիկական արքեպիսկոպոսության աթոռանիստը Սուլթանիայից (Իրան) փոխադրել էին ավելի մոտ հայերին՝ Նախճավան (Նախիջևան) քաղաքը³⁹։ Ժողովրդին սպառնացող վտանգը շատ մեծ էր. կաթողիկության դեմ մղվող զաղափարական պայքարը համախմբեց Գլաձորի համալսարանը Եսայի Նշեցու գլխավորությամբ, Ստեփանոս Օրբելյանի, Դավիթի, Մխիթար Սասնեցու և

37. Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Քաղաքական»-եր կամ Պոռնյանը, մասն Բ, էջ 201։

38. Նույն տեղում, էջ 209։

39. Մ. արքեպիսկ. Օրմանյան, «Ազգապատում», մասն Բ, էջ 1800—1801։

ուրիշ այլ նշանավոր գիտնականների մասնակցությամբ:

«Հասանելի մեք ընդ հարսն ի դժոխս իշանել և ո՛չ ընդ հոռոմոց»⁴⁰ յերկինս ելաներ», — հայտարարում էր Ստեփանոս Օրբելյան պատմիչը⁴¹:

Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանը միանգամայն իրավացի է, երբ նույնի նշեցու և նրա համալսարանի գործունեությունը կապում է ունիթոությունից դեմ մղվող պայքարի հետ: Գրաձորի համալսարանի գերը կաթոլիկության դեմ մղվող պայքարում մեծ է եղել և միաժամանակ շատ կարևոր նշանակություն է ունեցել հայկական կուլտուրայի անկախության ու ինքնուրույնության պահպանման գործում:

Թշնամու դադարաբախտության դեմ մղվող պայքարում բավական չէր հենվել միայն կրոնական սկզբունքների վրա, այլ հարկավոր էր գիտել պայքարի այն նորագույն միջոցներով, որոնք օգտագործում էր հակառակորդը, այսինքն՝ փիլիսոփայությամբ, բնական գիտություններով և այլն: Այդ ասպարեզում նույնի նշեցու և նրա համալսարանի կառուցած աշխատանքը նշանակալից էր: Հետագայում, նույնի նշեցու մահից հետո, այդ պայքարը հաջողությամբ շարունակեցին Հովհան Որոտնեցին իր աշակերտ Գրիգոր Տաթևացու հետ:

Նույնի նշեցու գիտական-գրական գործունեությունը սերտորեն կապված էր ինչպես եկեղեցական, այնպես էլ դպրոցական կյանքի հետ: Նա գրել է բազմաթիվ աշխատություններ աստվածաբանական-փիլիսոփայական բովանդակությամբ⁴²: Այդ աշխատությունները մեծ մասամբ հավաքական բնույթ ունեն, որոնց պարունակած նյութերը այժմ էլ կարևոր արժեք են ներկայացնում (որանք հունական և ասորական այն սկզբնաղբյուրներն ու թարգմանություններն են, որոնց բնագրերի մի մասը կորած են): Այսպես, օրինակ, Հովհան Ոսկերեբանի և Կյուրեղ Աղեքսանդրացու մի շարք աշխատությունները փրկվել և գիտությանն են ժառանգվել շնորհիվ պահպանված նույնի նշեցու թարգ-

մանությունների⁴³: Այդ աշխատություններում հիշատակվում են նաև այնպիսի հեղինակների անուններ, որոնք մինչև այժմ էլ հայտնի չեն գիտությանը, ինչպիսիք են՝ Հիպոլիտը, Պոլիկարոսը և ուրիշները:

Նույնի նշեցու աշխատությունները, թեև աստվածաբանական-փիլիսոփայական բնույթ ունեն, բայց բավական հետաքրքրություն են ներկայացնում մի քանի առարկաների վերաբերյալ այն նյութերով, որոնց մեջ կան մի շարք տերմիններ ու բացատրություններ հարադարապետության, ամբողջների, գործիքների, գեներների, հագուստների, ժողովրդական հավատալիքների վերաբերյալ և այլն:

Նույնի նշեցին հակալատին նշանակություն էր տալիս նաև կուլտուր-բաղադրական ակտիվ գործիչներ պատրաստելու գործին, որոնց պահանջն այնքան սուր անհրաժեշտություն էր երկրի համար մոնոպոլական տիրապետության ծանր տարիներին:

Մարդիկ իրենց հոգևոր ծարավը հագեցնելու համար Դաձորի համալսարան էին գալիս ոչ միայն բուն Հայաստանի տարբեր ծայրերից, այլ նաև հեռավոր Կիլիկյան հայկական թաղամասերից:

Դաձորի համալսարանում, կամ ինչպես հաճախ այն անվանվել է՝ «հայոց դպրոց»-ում սաները տարբեր գիտությունների գծով ուսանել են 6—12 տարի:

Այն մասին, թե հատկապես ի՞նչ առարկաներ են սովորվել Դաձորի համալսարանում, չկան որոշակի տվյալներ: Սակայն Տաթևի բարձրագույն դպրոցի մասին եղած տեղեկություններից կարելի է պատկերացում կազմել, թե ինչ առարկաներ են սովորվել Դաձորի համալսարանում: Հայտնի է, որ Տաթևի բարձրագույն դպրոցը հանդիսացել է Դաձորի համալսարանի ժառանգորդը, հետևաբար կարելի է ենթադրել, որ համալսարանը Դաձորից փոխադրվելու հետ միասին Տաթևի բարձրագույն դպրոցը ժառանգած պետք է լինի ուսման այն կանոն-թաղանթը, որ սովորվում էր Դաձորի համալսարանում:

Տաթևի համալսարանում աստվածաբանությունից բացի սովորվել են նաև փիլիսոփայություն, բնագիտություն, մաթեմատիկա, տիեզերագիտություն, բժշկություն, անատոմիա, պատմություն, ճարտասանություն և այլ առարկաներ:

Դաձորում ծաղկել է նաև նկարչությունը, որն անխզելիորեն կապված էր գրչության

40. Այսինքն՝ Հոռոմեական եկեղեցու կողմնակիցների հետ:

41. Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Նազդակյանը կամ Պոռչյանը», մասն Գ, էջ ԺԺ:

42. «Մեկնութիւն եղեկիւն ժողովրդի», «Մեկնութիւն բերականի», «Դիտիսիոս Արիստակացու յաղագրութեան յովանութեան լուծմունք», «Լուծմունք Սալայ ժողովրդութեան», «Բան վասն կարգաց եկեղեցոյ և ժամասացութեան», բազմաթիվ ձայեր, նամակներ, լուրերներ և այլն:

43. Հազվադեպ այդ աշխատությունները հայտնաբերել է Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանը 1917 թվին (տե՛ս նրա «Նազդակյանը կամ Պոռչյանը», մասն Բ, էջ 269, ինչպես և ռեկարատ: ամսագիրը, 1917 թ., էջ 193):

արվեստի հետ Աշխտեղ եղել են հատուկ զեղարվեստական արհեստանոցներ: Ձեռագրերի հիշատակարաններում մի շարք վկայություններ կան այն մասին, որ այն կամ այն նկարիչը սովորել է այսինչ վարպետի մոտ: Այսպես, 1334 թվի մի ձեռագրում (Հայկական ՍՍՏ Պետ. մատեն.-ի ձեռ. № 1379) նշված է, որ Թորոս Տարոնացի նկարչի մոտ սովորել են Հովհաննեսն ու Գրիգորիսը, իսկ 1314—1358 թվականների մի ձեռագրի (Հայկական ՍՍՏ Պետ. մատեն.-ի ձեռ. № 6230) հիշատակարանից հայտնի է, որ Գլաձորի հանրահայտ այդ վարպետի աշակերտն է եղել նշանավոր մանրանկարիչ Ավագը: Բայց անցյալի ո՛չ բոլոր նկարիչներն են կարողացել նման ակադեմիական բնույթի դպրոց անցնել: Շատ ղեպքերում նրանք հաճախ օգտվել են պատահական օրինակներից, ավելի փորձված բնիկներից պատահական ցուցումներից:

Համալսարանն ավարտելուց՝ հետո «ուսանող»-ները գրել են գիտական աշխատանքներ, պաշտպանության ներկայացրել «ավարտական ատենախոսություն»-ներ: Նախքան պաշտպանությունը նրանք պարտավոր էին քննություն հանձնել գիտական կրթավորներից կազմված հատուկ հանձնաժողովի առաջ, որից հետո նրանց շնորհվում էր «վարդապետ»-ի գիտական աստիճանի իրավունք էին ստանում «սաղմոսել, վարդապետել և յայտնել զբանս աստուածայինս, ի լեզուս խօսել և թարգմանությունս տանել առ ի շինություն եղբարց և ի կատարումն եկեղեցւոյ»⁴⁴: Գլաձորի համալսարանի ուսումնական դրվածքի բարձր միճակի մասին վկայում են ուսանողների գրած ավարտական ատենախոսությունները: Դրանք, ճիշտ է, գլխավորապես քարոզներ են եղել (օրինակ, «Ահեղ դատաստանի մասին» և այլն), բայց, չնայած կրոնական թեմատիկային, այդ աշխատությունները գրված են բնորոշ, զեղարվեստական բարձր ոճով ու լեզվով, որտեղ նույնիսկ ամենավերացական գաղափարներն ու մտքերը շարադրված են կոնկրետ ու իրական գույներով, շրջապատող կյանքից վերցված օրինակներով և սերտորեն ներհյուսված բնության նկարագրություններով:

Գլաձորի համալսարանում լուրջ ուշադրություն է դարձվել սաների քարոզչական պատրաստականության վրա: Նրանց հաղորդվել

է հետաքրքիր ու գրավիչ քարոզի հմտություններ: Այդ նպատակով գրվել են հոգվածներ ու շարադրություններ, քանի որ գիտակցել են, որ լավ քարոզը լավ հակահարված է կաթոլիկությանը:

Ավարտական ատենախոսությունների մի այլ տարրերից առանձնահատկությունն այն էր, որ այնտեղ նկատվում է մեծ սեր զեպի «փիլիսոփայական» խորհրդածությունները: Այսպես, մի այդպիսի աշխատության մեջ այն ժամանակվա գիտական գիրքերից ելնելով հետաքրքիր ձևով բնութագրվում է «արվեստ» հասկացողությունը, ճիշտ նույն ձևով, ինչպես այն գրված է Դիոնիսիոս Թրակացու մոտ. «Արտեստն է գումարումն հաւաքման յառաջակիրք արանց, զոր գտեալ և կրթեալ փորձիւ թողին այնոցիկ, որ զկնի զալոց էին, վասն պիտանացու ինչ իրաց և կարեաց աշխարհայնոց»⁴⁵: Իմաստն այստեղ այն է, ինչպես բացատրում է Ն. Աղոնցը, որ արվեստը ծագում և զարգանում է կուտակված գիտելիքների սերնդից-սերունդ փոխանցման ճանապարհով:

Քիչ չեն նաև իր ժամանակի համար առաջվոր՝ բնության և կենդանի աշխարհի բազմազանության պատճառները բացատրող մտքերն ու օրինակները. «Արար աստուած զերկինս և զհրեշտակս, զլուսն և զերկիր և զշուր և զհուր և զաւր, և են արարածք մեծամեծք և գլխաւորագոյնք, իսկ այլ արարածք ծայրք են և ծնունդք ի սոցանէ յառաջ եկեալք և շարախառնեալք ի զանազան կերպս և ի տեսակս, որպէս հուր, զի ծնաւ ի լուսոյ և ցուցիչ բնութեան նորա, զի առանց հրոյ ոչ երեի. և երկիր ծնաւ ի ջրոյ և աւուր և պատճառ գոյացութեան նոցա...»⁴⁶:

Գլաձորում, ինչպես և լուսավորության մյուս կենտրոններում, ինչպես գրում է վալերիյ Բրյուսովը, «գրվել են և՛ գիտական շարադրություններ, կատարվել են թարգմանություններ հին լեզուներից... հնագույն հուշարձանների համար ծանոթագրություններ են կազմվել, անցյալի հրաշալի ստեղծագործություններ են արտագրվել, ընդհանուր առմամբ, գրական կյանքը չի մեղմ, չնայած արտաքին բազմաթիվ հարվածներին, ապացուցելով, որ կենդանի է եղել հայ ժողովրդի ոգին»⁴⁷:

Նսալի նշեցու ղեկավարության օրոք միայն Գլաձորի համալսարանում սովորել,

44. Մեղբերումը քաղված է Լ. Խաչիկյանի «Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները», էջ 43 (տե՛ս «Գիրք զառաջանալոյ աշակերտացն ճշմարիտ բանին... յօրինեալ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ», «Մաշտոց ձեռնագրութեան», Վաղարշապատ, 1876 թ., էջ 111):

45. Н. Адонц. «Дионисий Фракийский и армянские толкователи», Петроград, 1915 г., стр. СХХIII—СХХIV.

46. Լ. Խաչիկյան, «Գլաձորյան համալսարանը», էջ 449:

47. Валерий Брюсов, «Летопись исторических судеб армянского народа», Ереван, 1940 г., стр. 110.

«վարդապետ»-ի գիտական կոչում են ստացել և եկեղեցական-քաղաքական ու գիտական-գրական առարկեղ են մտել 360-ից ավելի մարդ:

Համալսարանը տվել է մի շարք նշանավոր մտածողներ, բանաստեղծներ, մանկավարժներ, գրիչներ ու նկարիչներ և այլն, ինչպես են Հովհան Որոտնեցին (Տաթև), Տիրատուր Կիլիկեցին (Հերմոն), Մխիթար Սասնեցին (Մեծոփա վանք) և ուրիշները: Գլաձորում են կատարելագործվել Ստեփանոս Օրբելյան պատմիչը, բանաստեղծ փիլիսոփա Հովհաննես Նրզնկացին, բանաստեղծ խաչատուր Կեչառեցին և ուրիշները: Վերջապես այս համալսարանի անվան հետ է կապվում, ինչպես ենթադրում են, միջնադարյան հայ պոեզիայի պարծանք Յրիկի անունը: Մեզ են հասել նաև մանրանկարչության մի շարք գլուխգործոցներ, որոնք պատկանում են նշանավոր վարպետներ Մոմիկի, Թորոս Տարոնացու և շատ ուրիշների վրձինին:

Գլաձորի համալսարանի գործունեությունը տևել է մոտ 65—70 տարի, բայց նրա գործունեության դադարեցմամբ կանգ չի առել նրա սկսած գործը: Քաղաքական-տնտե-

սական անբարենպաստ պայմանների հետևանքով Հովհան Որոտնեցու կողմից տեղափոխվելով Տաթևի վանքը, համալսարանը շարունակել և առաջ է տարել Գլաձորի «հայոց դպրոց»-ի փառավոր ավանդները:

Հայ ժողովրդի կույտության ինքնուրույնությունը պաշտպանելու և հետագա դարացումն ապահովելու պատմական անհրաժեշտությամբ է պայմանավորված Գլաձորի համալսարանի գործունեությունը:

Գլաձորի համալսարանի և նրա արժանավոր ժառանգորդ Տաթևի դպրոցի զաղափարական հիմքերի և բարոյական ազդեցության շնորհիվ ապահովվեց հաղթանակը Հայաստանը վաղիկանին ենթարկելու դեմ մղվող պայքարում⁴⁵:

Գլաձորի համալսարանը հայկական կույտության պատմության մեջ հատուկ տեղ է զբաղում: Իր նշանակությամբ և հնությամբ այն կանգնում է համաշխարհային հանրահայտի համալսարանների շարքում:

45. Տե՛ս պրոֆ. Ն. Ազոնցի հոդվածը Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանի «Խաղբակչան» կամ Պռոշյանը... աշխատության Գ մասում, էջ 48:

